## 135. ՕՂՈՐՄԱԾ ՀՈԳԻ ՇՈՒՆ

*Հայու շուն կը փիտնա, տեր կը պատընքե ղջանդակ, առոք-փառոք կը տանե կը թաղե գոռներու մեջ։ Դատավոր պշան տեր կը կանչե.*

*— Գա՛ուր օղլի,— կըսե,— դու քա՞նի դլխու տեր իս, որ քու շուն կը տանիս հորիս մըջ մեր գերեզմըններուն։*

*— Դատավոր աֆանդի,— կըսե հայն,— հրամանք տուր խօսամ, ղիմ շան էրած բաներ, սորա ինչ կէնիս, էրե։*

*— Ը՛սե։*

*— Ախր իմ շուն, դատավոր աֆանդի,— ուրի՛շ բան էր. մեռնելուց չառեջ դինա՞ս ինչ օսյաթ թողեց. ընձի թանբի էրեց, որ հազար խուռուշ տամ քըզի, մնացած փեշքեշներ էլ չըմ ըսի՛։*

*— Է՜, ո՛րդի,— կըսե դատավոր,— օղորմած հոգի շուն ուրիշ էլ ի՞նչ օսյաթ է էրի. շուտ դնա՛, տաշածուրիկ քար մե թալ վըրեն, չէղնի ուր տեղ կորի։*